

Սոյն ինչպէս նաև յաջորդ նամակներուն Մխիթար Աբբահայր գրած պատասխանները չեն գտնուիր Սարգսի թղթոց ծրարին մէջ ի Վիվոնոյ: Սարգսէն ունինք յաջորդ երկրորդ նամակը՝ նոյն տարին գրուած առ Մխիթար Աբբահայրն (Գիւ. Մխ. վենետ.), որ կը խօսի Զմիւռնիոյ Առաջնորդ Սահակ Ահագին Արքեպիսկոպոսին տպագրելու գրած մէկ գրքին վրայ, որոյ մասին ընդարձակ պիտի գրենք Սարգսի հրատարակութեանց շարքին մէջ:

Գերայագելուծեան քում Ողջունիս Խնդարի ի Տեր:

Գիտակ լեցի Աբբահայրն իմ Հայր, զի յերկեան աւուր առ իս հասուցելոց գրեանց՝ մինն էր ողջունագիրն Սահակայ վարդապետին, յորում զտպագրեցմանէ Օրինակաց գրգոյն զբազում աղերսելաբար դրեալ էր առ իս, զորոց ծանուցանել մի ըստ միջէ Տեառնդ ի ձեռն դրոյ իմիք՝ առ երկարս տարածի, եւ մանաւանդ որպէս պիտոյն է ոչ բացայտի: Ուստի կարօտի այսմ, զի ի մէջ սակաւ միջոցիս այսմիկ՝ փոխաբերապէս խորհրդակցիցիմք ընդ երկարս զերակութենէ զայսմանէ, որովհետեւ ի պատրաստի է սլանալն փօստին դէպ յայնկոյս յերկուշաբաթիս: Նա եւս զի փութացուցեալ է վերոգրեցեալ պետն՝ վաղիւ գրել զպատասխանն գրոյն: Յաղագս որոյ եթէ կարելի իցէ յուղարկեսցես այսօր ի քսաներորդ ժամու զպարքայն վանաց, զի գալով իմ յայդր՝ խօսեցայց ընդ Տեառնդ իմոյ, առ ի համահամբոյր դիտաւորութեամբ գրել պատասխանատեարն, լինելով քոյ ողջ յաւէտագունիւ պերճափառութեամբ ի պարծանս իմս նուաստութեան

Սարգիս Արքեպիսկոպոս Աես.

1745 ի Հոկտ. 2 ի վէնէցիայ: